# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՆԳԱ ՏՐԱՆՍ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 44 | մարտական հանդերձանք | մարտական հանդերձանք | <<Անգա Տրանս>> ՍՊԸ | Ձմեռային կոստյում արհեստական մորթե օձիքով, կոմուֆլյաժ գործվածքից: Ձմեռային կոստյում արհեստական մորթե օձիքով բամբակյա գունաքողարկման թելի 4C5-KB-кмф արտիկուլի անջրանցիկ շերտով գործվածքից, 1մ2 մակերասային խտությունը՝ 210գր., բաղադրությունը՝ 53% բամբակ, 47% պոլիէսթեր, տաք ներդիրով: Ձմեռային կոստյումը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Բաճկոնի առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով, երկկողմանի մզդակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով միակողմանի մզդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառը մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | արհեստական կտորից, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր: Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով, երկու կարանի: Առաջամասերում մշակված են վրադիր 2 գրպաններ կրծքամասում և 2 ներկարված կողային թեք գրպաններ: Կրծքամասի գրպանի լայնությունը 14սմ, երկարությունը 15սմ, կափույրի լայնությունը 6,5սմ: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0.1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ 15մմ տրամագծով կոճակով: Բաճկոնը ունի ներկարված թևքեր: Թևքերի բազուկային մասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող էլաստիկ ժապավենից ամրացրած պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Բաճկոնը կոճկվում է շղթայով և 5 հատ 18 մմ տրամագծով կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 2սմ: Բաճկոնի դրսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակվում է 4-4.5սմ լայնությամբ գոտի /եզրաշերտ/ մեջը գոտկանման պարան՝ իրանի հարմարեցման չափսերի կարգավորման համար: Վզատեղը մշակված է ծալովի օձիքով, որի միացման կարում մշակված է կախիչ: Լանջափեշի ձախ կողմում մշակված է ծոցագրպան ատրճանակի համար: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական բռնակով: Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կոճկվում է մեկ օղակով և կոճակով: ՈՒսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ կոճակ օղակով: Բաճկոնին կոճկվում է հանովի մորթե օձիք, որը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 14մմ տրամագծով կոճակներով: Օձիքի մորթու 1մ2 մակերեսային խտությունը՝ 730 գրամ +/-50գ/ մ2, խավի բարձրությունը՝ 12մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով: Տաբատը՝ մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով: Գոտու վրա տեղադրված են 6 կամրջակներ և գոտու չափը կարգավորող 2 ախլակներ: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 հատ 14 մմ տրամագծով կոճակով: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Տաբատի առաջամասում արդուկի կարը /ստրելկա/ միակար կարված: Տաբատը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, շղթայով և 1 հատ 14 մմ տրամագծով օղակ կոճակով, գոտու վրա: Տաբատի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: Արտաքին տեսքը՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N 1750-Ն «ՀՀ ազգային անվտանգության մարմինների զինծառայողների միասնական համազգեստի, տարբերանշանների ձևերը և դրանց նկարագրերը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հաստատելու մասին» որոշման: Նախքան մատակարարումը սկսելը հանդերձանքի նմուշները համաձայնեցվում են Գնորդի հետ, որից հետո Գնորդը Վաճառողին տրամադրում է հանդերձանքի քանակները՝ ըստ չափսերի և հասակների: Հանդերձանքի յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ, որի վրա պետք է նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվածքի 300C ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: |

**ПОЛНОЕ ОПИСАНИЕ**

**предлагаемого товара**

ООО Анга-Транс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 44 | военная форма | военная форма | <<Анга Транс>> ООО | Зимний костюм с искусственным меховым воротником, камуфляжная ткань. Зимний костюм с искусственным меховым воротником из водонепроницаемой хлопковой камуфляжной ткани, артикул 4С5-КВ-кмф, поверхностная плотность на 1м2 - 210 г, состав: 53% хлопок, 47% полиэстер, с утепляющей вставкой. Зимний костюм состоит из куртки и брюк. Передняя и задняя части куртки выполнены из водонепроницаемой синтетической ткани, с двух сторон прошиты синтепоном с поверхностной плотностью 300 грамм, рукава из водонепроницаемой синтетической ткани с синтепоном с поверхностной плотностью 200 грамм. Подкладка изготовлена из синтетической ткани с поверхностной плотностью 70 грамм, состав из 100% полиэстера. Задняя часть |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | куртки выполнена из тисненой кокетки, двухшовная. Спереди имеются 2 накладных кармана на груди и 2 боковых наклонных кармана. Ширина нагрудного кармана 14 см, длина 15 см, ширина клапана 6,5 см. Клапаны и края карманов прошиты швом до 0,6 см в ширину. Боковые швы тиснены с шириной шва 0,1 см. Клапаны застегиваются потайной пуговицей с 2 петлями диаметром 15 мм. Куртка имеет вшитые рукава. На плечевой части рукавов имеются сложные крепления из эластичных лент, проходящие через края, которые крепятся петлей и двумя пуговицами диаметром 15 мм. Куртка застегивается на цепочку и 5 пуговиц диаметром 18 мм, выполненных на потайной кромке. Нижняя часть куртки и рукавов сложены и прошиты. Ширина намотки в готовом виде - 2 см. С внешней стороны куртки по направлению талии пояс 4-4,5 см /кайма/, внутри поясовидная веревка, для регулировки размера талии. Воротник выполнен из отложного воротника с петлей для подвешивания на шве присоединении. С левой стороны борта выполнен нагрудный карман для пистолета. Внутри кармана крепится веревка с металлической ручкой. На правой части подкладки куртки выполнен нагрудный карман с планкой, который застегивается одной петлей. На плечах ремни прикрепляются к плечам из той же ткани, плечи крепятся погоны на крючках из той же ткани, крючки застегиваются с помощью одной петли и пуговицы. К куртке крепится сменный меховой воротник, котороый крепится 5 петлями |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | дополнительного слоя и 5 пуговицами диаметром 14 мм. Поверхностная плотность воротника на 1м2 - 730 г +/- 50 г / м2, высота слоя - не менее 12 мм, цвет серый. Край воротника прошит лицевой стороной ткани. Брюки выполнены с поясом, прошитым ромбовидной формой. Передняя часть с боковыми карманами с наклоном и вырезом. Верхняя часть кармана обработана швом шириной 1 см. На поясе крепятся 6 шлевок и 2 крючка, регулирующие размер. Крючки крепятся с помощью 1 петли и 2 пуговиц диаметром 14 мм. На передней части выполнены подколенники. В передней части брюк утюжная строчка (стрелка) – сшита одношовно. Брюки застегиваются потайной застежкой, цепью и одной пуговицей диаметром 14 мм на поясе. Подкладка для брюк обрабатывается с помощью синтепона поверхностной плотностью 200 граммов, который прошит вместе с прокладкой в 15 см от внутреннего края. Внешний вид в соответствии с утвержденным образцом. Изготавливаются от 44/2 до 64/6 размера. С внутренней стороны куртки и брюков должен быть наклеен ярлык по уходу за одеждой, на котором должно быть отмечено имя организации производителя, размер, рост, состав ткани и информация по уходу (температура воды 300С, температура глажения и химчистки). Над второй пуговицей на куртке должен висеть ярлык, на котором должно быть наименование ассортимента, размер, наименование организации производителя, дата |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | изготовления. Упаковка: пачки, в каждой пачке 10 коплектов, ассортимент в прозрачных полиэтиленовых мешках, в 1 мешке 1 комплект. Размеры пачек должны соответствовать размерам формы, чтобы форма не помялась. Пачки маркированы, на ярлыках должны быть указаны наименование, количество, размер, наименование производителя, месяц изготовления и дата изготовления. Поставляемый товар должен быть новым, неиспользованным, в заводской упаковке, товар перевозится на машине, выгрузка рабочей силой осуществляется поставщиком. |